



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N _____

_____ 2012 թ.

Ա/Ձ Արամ Պոշնակյանին

հասցե՝ ք.Երևան, Մ.Խորենացու 231/82

Կից ուղարկվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 11.04.2012թ. թիվ 13/3 որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

Քննարկվեց Ա/Ձ Արամ Պոշնակյանի դիմում-բողոքը վարչական վարույթ հարուցելու և պարտավորության վերահաշվարկ կատարելու պահանջի մասին:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Արամ Պոշնակյանը ծանուցվել է սույն բողոքի քննության օրվա, ժամի և վայրի վերաբերյալ, սակայն վերջինս բողոքի քննարկմանը չի ներկայացել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ Ա/Ձ Արամ Պոշնակյանի դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ կողմից 24.10.2011թ-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Ա/Ձ Արամ Պոշնակյանից 1.186.600 դրամ բռնագանձելու, բռնագանձումը նրա գույքի և դրամական միջոցների վրա տարածելու պահանջի մասին: Ըստ հայցադիմումի, Ա/Ձ Արամ Պոշնակյանի պետական բյուջեի հանդեպ ավելացված արժեքի հարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների պարտավորությունը 20.09.2011թ. դրությամբ կազմում է 1.186.600 դրամ, որից ապառք՝ 730.700 դրամ, տույժ՝ 307.200 դրամ, տուգանք՝ 148.700 դրամ: Մասնավորապես, ԱԱՀ-ի պարտավորությունը կազմում է ընդամենը 977.100 դրամ, որից ապառք՝ 566.200 դրամ, տույժ՝ 262.200 դրամ, տուգանք՝ 148.700 դրամ: ԱԱՀ-ի գծով պարտավորությունն առաջացել է Ա/Ձ Արամ Պոշնակյանի կողմից Շենգավիթի ՀՏ ներկայացրած 2010թ-ի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների ԱԱՀ-ի հաշվարկներով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորությունը կազմում է ընդամենը 209.500 դրամ, որից ապառք՝ 164.500 դրամ, տույժ՝ 45.000 դրամ: Պարտավորությունն առաջացել է 2010թ-ի Ա/Ձ Արամ Պոշնակյանի պարտադիր սոցիալական ապահովության վճարի տարեկան եկամուտների մասին հայտարարագրով և <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի 3-րդ մասի պահանջները չկատարելու արդյունքում:

ՀՀ վարչական դատարանը 27.02.2012թ-ին կայացրել է թիվ ՎԴ/6107/05/11 վճիռը, որի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ հայցը բավարարվել է:

Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <գ> ենթակետի. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե գոյություն ունի միեւնույն անձի, միեւնույն առարկայի վերաբերյալ եւ միեւնույն հիմքերով ուժի մեջ մտած վարչական կամ դատական ակտ. >:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <գ> ենթակետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Արամ Պոշնակյանի դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <գ> ենթակետի դրույթներով Ա/Ձ Արամ Պոշնակյանի դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ